ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

Թեմա՝ «Երաժշտություն» առարկայի դասավանդման նպատակն ու խնդիրները

Կազմեց՝ Նելլի Սիմոնյանը

Ագարակի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Միլենա Մինասյան

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

(վերապատրաստող դպրոցի անվանումը)

ԿԱՊԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 4
Գլուխ 1. «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ----------5
1.1. «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴՐՎԱԾՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ. ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ----------5
1.2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ----------7
1.3. ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ----------8
ԳԼՈՒԽ 2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ----------10
2.1. «ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»----------10
ԳԼՈՒԽ 3. ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ----------11
3.1. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿ----------11
3.2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿ----------14
4. ԱՐՎԵՍԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ----------15
4.1. ԵՐԳ ----------16
4.2.ՌՈՄԱՆՍ ----------18
4.3.ԿԱՆՏԱՏ ----------19
4.4.ՕՊԵՐԱ ----------20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ----------23
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------24

Ով իր մեջ չունի երաժշտություն,
Եվ չէ զգացվում քաղցր դաշնակությունից՝
Նա ընդունակ է դավի, գերփանքի և խարդավանքի…

Վ. Շեքսպիր

Երաժշտություն պետք է սովորեցնել բոլոր երեխաներին, ինչպես սովորեցնում են մաթեմատիկա և աշխարհագրություն:

Դ. Բ. Կաբալևսկի

Ռիթմն ու ներդաշնակությունը ամենից խոր թափանցում են մարդու հոգին և ամենից ավելի հրապուրում նրան, եթե ճիշտ է դրված դաստիարկությունը: Դա հայտնի է փորձից, երբ մենք ականջով ընկալում ենք ռիթմն ու մեղեդին, փոփոխվում է մեր հոգեկան վիճակը: Երաժշտության ընկալումը տանում է այն բանին, որ մենք սկսում ենք զգալ նույն զգացումները՝ կենցաղի ճշմարտությունը ընդհատվելու ժամանակ:

Պլատոն

Եթե ինձ վիճակվեր կրկին ապրել իմ կանքը , ես ինձ համար կարգ կսահմանեի, կարդալ ինչ – որ թվով ոտանավորներ, և լսել ինչ –որ չափով երաժշտություն… հնարավոր է, որ նման վարժության միջոցով ինձ հաջողվեր պահպանել ուղեղիս այն մասերի ակտիվությունը, որոնք հիմա ատրոֆիայի են ենթարկվել: Այդ հակումների կորուստը հավասարազոր է երջանկության կորստի և, գուցե, վնասակար ազդեցություն ունի մտավոր ունակությունների, իսկ ավելի հավանական է , բարոյական հատկանիշների վրա, քանի որ թուլացնում է մեր խառնվածքի հուզական կողմը:

Չ. Դարվին

Երբ երաժշտությունը փուչ է ու դատարկ, ժողովուրդը ծույլ է ու սանձարձակ, վայրենի ու արհամարանքի արժանի: Իսկ երբ ժողովուրդը ծույլ է ու սանձարձակ՝ առաջանում են անկարգությունները, թուլանում է բանակը, փխրուն են դառնում պատերը, և սպառնում են երկրային թշնամիները:

Սյուն Ցզին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՜ ընթերցող.

«Երաժշտություն» առարկայի հետազոտական աշխատանքը ամբողջությամբ նվիրված է առարկայի կրթադաստիարակչական ուումնառությանը, որը չափվում է ոչ միայն մարդու՝ հոգեկիրթ աշակերտի յուրացրած գիտելիքներով, այլև ձեռք բերած կարողությունների արդյունքով: Գիտելիքը դառնում է շինանյութ, որ օգնի աշակերտին «կառուցելու» սեփական յուրացումները և կարողությունները, անձի զարգացումը տանելով գրքից դեպի կյանք, խոսքից դեպի փորձ ու զգացումներ: Զգացմունքները մեծապես նպաստում են մտքի սրությանը, իմացական կարողությունների առավել ինտեսիվ զարգացմանը.

Ըստ բովանդակային թեմաների, ենթաթեմաների, ստեղծագործական աշխատանքների հանգամանալից ներկայացվում է աշակերտի հոգեկիրթ դաստիարակությունը և զարգացումը, ինչպես նաև երաժշտության կարևորագույն նշանակությունը հանրակրթական դպրոցում: Թեմատիկ գիտելիքները, կրթադաստիարակչական նպատակները, խնդիրները, լուծումները ներկայացնում եմ ստորև:

Գլուխ 1. «Երաժշտություն» առարկայի դասավանդման նպատակն ու խնդիրները:

- «Երաժշտություն» առարկայի դրվածքը դպրոցում
- «Ուսուցման նոր մեթոդներ»
- «Ազգային կրթություն»

2.«Գեղագիտական դաստիարակության խնդիրները», «Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում»

«Գեղագիտությունը որպես արվեստի ուսուցման դաստիարակություն»

3. «Արվեստի դերն ու նշանակությունը»

- «Երաժշտությունը արվեստի տեսակ»
- «Արվեստի փոխկապվածությունը ու փոխազդեցությունը»

ԳԼՈՒԽ 1. «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴՐՎԱԾՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ. ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջով: Արվեստի այս դասին երեխաները ներգրավվում են երաժշտական հնչյունների ներդաշնակ «աշխարհը»՝ երգում, պարում, ունկնդրում և այդ բոլորից ստանում գեղագիտական հաճույք: Այս առարկայի նպատակն է դաստիարակել հոգևոր ու բարոյագեղագիտական արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակ ու ակտիվ ունկնդիր, ով կարող է արժևորել իր ազգային և համամարդկային մշակույթը:

Երաժշտությունն օգնում է սերունդներին փոխանցել ազգային ոգին ու ծանոթացնում մեր նախնիների հոգևոր կյանքին: Դպրոցում է սկսվում երեխայի երաժշտական դաստիարակությունը, որն ընդհանուր դաստիարակության մի բաղադրամասն է կազմում: Թեմաների յուրացումը կատարվում է պարզից բարդին անցնելու սկզբունքով: Երեխաները նախ և առաջ սովորում են լսել երաժշտությունը, լսողական որոշակի փորձ են կուտակում, հետո միայն աշխատում են տարբերել ստեղծագործությունների տեսակը, բնույթը, տրամադրությունը: Բոլոր դասարանների ծրագրով նախատեսված թեմաներն անմիջական կապ ունեն միմյանց հետ: Մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն է: Ծրագարային նյութի թեմատիկ կառուցվածքը հնարավորություն է տալիս ոչ միայն տրամաբանական կապ ստեղծելու առանձին դասերի, կիսամյակների, տարիների միջև, այլ այդ կապի շնորհիվ զարգացնելու երեխայի երաժշտական ունակությունները՝ հենվելով դիդակտիկայի և երաժշտական արվեստի զարգացման օրինաչափությունների վրա:

Երեխաների երաժշտական զարգացման մակարդակն անհավասար է: Բնականից օժտված, երաժշտության նկատմամբ մեծ հետաքրքրություն դրսևորող, արագ ընկալող, լսած երաժշտությունը վերարտադրող երեխաների կողքին կան նաև երաժշական թույլ ընդունակություններ ունեցողները, որոնք դասի ընթացքում պասիվ են և անտարբեր: Նման երեխաները ուսուցչի ուշադրության կենտրոնում են:

Երգի ուսուցումը իրականացվում է համաձայն նախօրոք կազմած պլանի, որտեղ առաջադրվում են ուսուցողական և դաստիարակչական խնդիրները:Երեխաները ավելի շատ երգում են առանց նվագակցության: Աշակերտները ունկնդրում են թեմայի հետ կապված համապատասխան ստեղծագործություններ և երգում երգեր:

Ունկնդրման համար նախատեսված ստեղծագործությունների հիմնական մասը երեխաները լսում են ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով: Որից հետո մտորում է լսածի մասին, արտահայտում իրենց տպավորությունները: Դպրոցում երեխայի ռիթմական զգացողության զարգացումը սկսվում է ռիթմիկայից. Դրվում է կարգավորված, նպատակաուղղված գիտակցական հիմքերի վրա: Երաժշտության հետ երեխայի հանդիպումը դպրոցում սկսվում է երգով, երաժշտական ստեղծագոծութունների ունկնդրմամբ, հանպատրաստից ստեղծագործելով, երաժշտառիթմական շարժումներ կատարելով, մասնավորապես՝ ռիթմական շարժումներ, որոնք առաջանում են ինքնաբուխ, երեխայի ներքին ռիթմի համաչափ շարժումներից, ինչպես նաև երգերի կատարումից և երաժշտության ունկնդրումից:

Երաժշտության դասին կիրառվում է տեսողական միջոցներ, որը ուսուցման գործընթացը դարձնում է ավելի հետաքրքիր ու նպատակաուղղված, նպաստելով երեխաների ինքնուրույնության և երևակայության զարգացմանը: Դպրոցում «Երաժշտություն» առարկայի ժամին աշակերտները սովորում են գրել և կարդալ երաժշտությունը, բնական նվագարաներով նվագակցում են հնչող երաժշտությանն և երգերին: Երաժշտության դասի համալիր բնույթից ելնելով, երաժշտական գործունեության բոլոր տեսակներն (երգեցողություն, ունկնդրում, երաժշտառիթմիկ շարժում, իմպրովիզացիա, նվագ) միահյուսվում են այնպես, որ գործունեության մի տեսակը մյուսով փոխարինելիս չխախտվի դասի թեմայի ներքին տրամաբանությունը, որպեսզի դասը դառնա երաժշտական կարողություններ, հմտությունների և արժևորման համակարգի զարգացման գործընթաց: Ստեղծագործաբար օգտագործվում են ուսուցման և դաստիարաակության նոր ձևերն ու մեթոդները, որը ծրագրային նյութի ուսումնադաստիարակաչական աշխատանքներն դարձնում են նպատակային:

1.2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Դպրոցական առարկաների համակարգում արվեստները, մասնավորապես երաժշտությունը, հանդես են գալիս ոչ միայն իբրև սովորողների գեղագիտական դաստիարակությունը ապահովող, նրանց հուզազգացմունքային զարգացումը կազմակերպող, այլ նաև կրթական համակարգը մարդկայնացնող: Պատահական չէ, որ դեռ 5-րդ դարում Սահակ-Մերոպյան առաջին հայկական դպրոցներում երաժշտությանը տրվել է կարևոր դեր և նշանակություն:

Փոխվում են ժամանակները, փոխվում են նաև ուսուցման և դաստիարակության պահանջներն ու բովանդակությունը, մեթոդները, սակայն երաժշտությունը շարունակում է կատարել դաստիարակող և զարգացնող իր առաքելությունը:

Ամեն ժամանակաշրջան առաջ է քաշում ուսուցման և դաստիարակության իր պահանջները, մշակվում են նոր մոտեցումներ, նոր տեխնոլոգիաներ: Ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման խնդիրն այսօր էլ գտվնում է մանկավարժական մտքի ուշադրության կենտրոնում:

Հանրակրթական դպրոցի երաժշտության դասն ունի համալիր կառուցվածք:

Երեխաների երաժշտական համալիր զարգացումն ներառում է նրանց բազմաբնույթ մտածողությունը: Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումն երաժշտության դասերին կատարվում է սովորողների համագործակցային ուսուցման անհատական և խմբային երաժշտական գործունեությունն ապահովող բազմապիսի աշխատանքներում (երգել, պարել, նվագել, ստեղծագործել, նկարել և այլն)՝ հենվելով աշակերտների անհատական, հոգեբանական առանձնահատկությունների, արժեքային կողմնորոշման կարողությունների վրա:

Երաժշտության դասին բազմատեսակ երաժշական գործունեությունը նպաստում է՝ սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը, ստեղծագործական մտածողության և երևակայության զարգացմանը, աշակերտների բնածին ընդունակությունների ձևավորմանն ու զարգացմանը, միջանձնային շփմանը, հաղորդակից ձևերի յուրացմանը, ուրիշի կարծիքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակմանը, մտքերի փոխանակման և բանավիճելու կարողությունների զարգացմանը (խմբային համագործակցված աշխատանք), աշակերտների ներքին հնարավորությունների և մտավոր կարողությունների բացահայտմանը և զարգացմանը, միջառարկայական կապերի հաստատմանը:

Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումով ուսուցիչը ոչ միայն ուսուցանում և դաստիարակում է, այլ նաև ակտիվացնում ու խթանում է սովորողների

ինքնազարգացման ձգտումը՝ սովորեցնում է սովորել, ու հասնում է ուսուցիչ-աշակերտ երկխոսության արդյունքին

1.3. ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինչպես միշտ, այնպես էլ այժմ մենք արթնանում և միավորվում ենք արտաքին և ներքին վտանգների պարագայում:

Երբ պայքարում ես ինչ որ բանի դեմ, առնվազն պետք է հասկանաս, թե ինչն են պաշտպանում: Ո՞րն է հայկական կրթությունը կամ ընդհանրապես հայկականությունը և հանուն ինչի՞ է այդ պայքարը: Կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կնպաստեն կրթութան և գիտելիքի վարկանիշի մեծացմանը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությանը: Նախ, երբ խոսում ենք ազգային դպրոցի մասին, պետք է նկատի ունենանք՝ լեզուն, բարոյական-արժեքային համակարգը, գիտելքի բովանդակությունը, աշխարհայացքային առանցքը: Ժամանակն է հասկանալու պարզագույն իրողություններ, ազգային քաղաքական տնտեսական որևէ խնդիր լուծում չունի առանց կրթության: Ամեն ինչ սկսվում է կրթությունից և վերջանում կրթությամբ: Կրթությունը ազգային գոյության առանցքն է:

Տարածվում է այն կարծիքը. Թե ազգային գաղափարախոսության մասին խոսելը ժամանակավրեպ է, կամ այն կեղծ կատեգորիա է, ինչպես նաև դիտարկվում է որպես ֆաշիզմ: Վերջապես Հայ Ազգային Իմաստասիրական մտքի ոսկե շտեմարան է Ցեղակրոն ուսմունքը ամբողջությամբ: Այն կյանքի ուղեցույց ու խորհրդատու Ուսուցիչ է:

«Ով հայրենապաշտ ու գաղափարապաշտ երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի: Փրկությունը սրա մեջ է կամ և ոչ մի բանի, չմոռանանք և այդ: Կործանման են դատապարտված այն ազգերը, որոնք չունեն ազգային կայուն կրթական համակարգ»: Գարեգին Նժդեհի այս խոսքերը բոլոր ժամանակների ու բոլոր երկրների համար են:

Ժամանակակից իրականության աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու համար ցանկացած պետություն առաջին հերթին պետք է աճեցնի մտածող ու ստեղծագործ քաղաքացիներ:

Համաշխարհային գործընթացներում մասնակցություն ունենալու համար պետք է կրթել, դաստիարակել մտավոր կարողություններով մրցունակ սերունդ, որն իր մասնակցությունը կունենա ժամանակակից քաղաքակրթության զարգացման մեջ՝ նպաստելով սեփական հայրենիքի զարգացմանը: Դրա համար մատաղ սերնդին անհրաժեշտ է դաստիարակել ազգային մտածողության հենքի վրա: Միայն ազգային

հենքի վրա կարող ենք ունենալ Հայաստանի լուսե ապագան: Դեպի ազգային առանցք գալու համար անհրաժեշտ է. բարեփոխական սրտաբուխ մոտեցում, կրթության հիմքով ինքնակրթությամբ զարգացած մտածողություն, զուգահեռաբար հոգևոր մեծ զարգացում:

ԳԼՈՒԽ 2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. «ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»

Գեղագիտությունը փիլիսոփայական գիտություն է, ուսումնասիրում է արվեստի զարգացման օրինաչափությունները:

Գեղագիտությունն աշխարհի գեղագիտական գնահատման արժեքային համակարգ է, մարդու բազմաբնույթ գործունեության դրսևորման յուրահատուկ ոլորտ: Գեղագիտությունը գեղեցիկի մասին իմացական, իմաստնական գիտություն է:

Հենց գեղագիտական գաղափարների հիման վրա է ստեղծվել արվեստը որպես երևույթ, սերվել սիրո ակունքից: Այսպես է ծնվում վեհն ու գեղեցիկը ու բերում երազանքի արարում:

Գեղագիտության կևորագույն խնդիրներից է նաև գեղագիտական դաստիարակությունը, որը պետք է սկսել վաղ մանկությունից: Պետք է զարգացնել «տեսնելու», «լսելու», «ընկալելու», «գնահատելու», «արժևորելու»,,,կարողություններ: Քաղաքակրթական խնդիրների բոլոր լուծումները հենց այստեղ են: Խնդիրներ, որոնք պետք է լուծվեն սիրո լույսի, գեղեցիկի իմաստնական իմացությամբ: Այն ձևավորում է մշակութային գիտակցություն: Մշակութային գիտակցությունը մարդու ազգի նկարագիրն է: Այն ճշմարիտի բացարձակ անվախ գիտակցումն է, որը պետք է լինի ըստ էության:

ԳԼՈՒԽ 3. ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿ

Ի՞նչ է արվեստը, արվեստի ի՞նչ տեսակներ կան, ի՞նչ արտահայտչամիջոցներով են արտահայտվում և վերջապես ինչպես է հարաբերվում արվեստը իրականության հետ: Ասում ենք արվեստ ու իրականություն, և հարց է առաջանում, ո՞ր իրականության մասին է խոսքը կամ ի՞նչ է իրականությունը արվեստում, ինչպե՞ս է հարաբերվում արվեստը իրականության հետ: Կարելի է խոսել արվեստի մասին, նրա արդիականության, պատմական առումով, բայց արվեստը ինքն իրենով նեկայություն է , որ դիմում է իրականությանը ներկա պատմական առումներով:

Պատմական արվեստը որպես իրականություն և որպես ժամանակի իրողություն խոսում է վերժամանակյա մնայուն փորձությամբ դիմակայված բարձրակարգ դիրքից: Այն հայացք է ժամանակներից դեպի տարածաչափական երևակայական իսկություն: Այն հիշողության մեջ իմաստավորում է մասնակցության լինելիությամբ, որպես ժամանակների բնակիչ: Եվ արվեստի միջոցով հաղորդակցվում ենք մեր պատմական կենսագրության հետ: Այն վկան է ազգային հիշողության՝ բնազանցական հիշողության, առանց որի ազգ լինել չի կարող: Այն ինքնագոյատևման մեծագույն հարստությունն է, զենքն է, մեծագույն արժեքը: Արվեստը կայացած փաստ է և իրողություն:

Պատմական սահմանների ժամանակյա ազդեցությունը անրադառնում է նաև արվեստի սահմանների վրա: Եվ արվեստի ամբողջականությունը երերում է, հայտնվելով խոշոր պատմական ազդեցությունների ներքո, դառնում օտարի համար նյութ՝ «սեփականը» զարգացնելու ու հետո որպես իրենը մատուցելու: Խախտվելով արվեստի տարածաշրջանային ներդաշնակությունը, խախտվում է նաև ազգային հիշողության ներդաշնակությունը, փոխակերպվում է ֆունկցիան արվեստի ու որպես զենք մնում հենց այնտեղ, որտեղ տիրաբար կպահպանեն: Արվեստը ձգվում է դեպի անսահմանություն, ընդհուպ մինչև վախեցնող անսահմանություն: Արվեստի ուժը գերբնական է, այնտեղ են միավորվում միտքը, հնչյունը, գույնը, որտեղ տիեզերական ազդեցությամբ որոշվում է շատ բան:

Այն օգնում է ապրել, կերտել, արարել, զգալ այս ամենը և միևնույն ժամանակ ապրեցնել ու ապրել, ազդվել ու ազդել, լիցքավորվել ու լիցքավորել որպես աստղային ճայթուկ խավարում և շողաճաճանչ ցոլքեր լույսի մեջ: Գեղեցիկի և մարդկայնացնող հզոր գեներատոր է արվեստը իր տեսակներով հանդերձ՝ միաձույլ ու զատ, հզոր

սնունդ հոգու համար և բալասան սրտի համար: Այն հնչում է ամենուր և անընդհատ, լռության մեջ և նրանից դուրս: Անցումային այս ճանապարհը ծնունդն է հնչողության, ազդեցությունը՝ ապրումի: Արվեստը մարդու ստեղծագործական գործունեության ձևերից մեկն է: Այն հոգեկրթում է մարդուն հնարավորություն տալիս ավելի լավ հասկանալու կյանքը, ճանաչելու աշխարհը, զգալու և տեսնելու գեղեցիկը: Երաժշտությունը, շատ լուրջ ֆակտոր է մեզ հուզելու և ուղղելու համար: Այն արվեստի տեսակ է, որը գեղարվեստական կեպարներն արտացոլում է մարդու վրա, ներգործում է հնչյունների հատուկ ձևով կազմակեպված իմաստավոր հաջորդականությունների միջոցով: Երաժշտությունը սկզբնավորվել է նախամարդու հուզական խոսքի ելևէջների աշխատանքային ռիթմերի, ձայնային ազդանշանների, թռչունների երգի ու կենդանիների զանազան կանչերի հմայանքի հնչյունային տարրերի հիման վրա:

Երաժշտության հիմնական տարրերն ու արտահայտչամիջոցներն են՝ լադը (ձայնակարգը, հնչյունների բարձրությունների և նրանց որակապես տարբերակված հարաբերությունների վերացարկված համակարգը), ռիթմը (հնչյունների տևողությունների, կազմակերպված հաջորդականությունը), չափը (ռիթմի կազմակերպման համակարգը), տեմպը (ստեղծագործության կատաման արագության աստիճանը), ներդաշնակությունը, բազմաձայնությունը, գործիքավորումը և այլն: Երաժշտության պատմականորեն առաջացած արտահայտչամիջոցների ողջ համադրումը երաժշտական լեզուն է:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր երաժշտական լեզուն, օգտագործելով երաժշտական լեզունների որոշակի տարրերն ու ընդհանուր կանոններն, ձևափոխելով դրանք՝ կոմպոզիտորը ստեղծում է իր անհատական լեզուն:

Երաժշտական երկի գոյությունը պայմնավորված է տարբեր աստիճանների ստեղծագործական 3 փուլով՝ հորինում, կատարում և ընկալում:

Նախնադարում առաջացած երաժշտության հնագույն տեսակները (հմայական ծեսի, աշխատանքի, որսորդության) միախառնված էին արվեստի այլ տեսակների տարրերին: Աստիճանաբար սկզբնավորվել է ֆոլկլորը, որը հետագայում դարձել է պրոֆեսիոնալ արվեստի հիմքը:

Հին աշխարհում գործել են մասնագետ երաժիշտները, տաճարներում ու պալատներում հնչել է երգը, նվագել են տավիղ, քնար:

Միջնադարում երաժշտական մշակույթը միավորել է ժողովրդական, կիսապրոֆեսիոնալ և պրոֆեսիոնալ երաժշտությունը: Ծաղկել է վիպասանների, գուսանների, թափառաշրջիկ երգիչների, աշուղների ու ակինների արվեստը: Ընդունված է երաժշտությունը բաժանել հոգևորի (եկեղեցական) և աշխարհիկի:

17-րդ դարում և 18-րդ դարի կեսին վերջնականապես գերիշխել է աշխարհիկ երաժշտությունը: Կազմակերպվել են մշտական օպերային թատրոներ, երաժշտական ընկերություններ, ժամանակակից ձևերն են ստացել լարային աղեղնավոր գործիքները, ստեղծվել է առաջին դաշնամուրը, կարևորվել է երաժշտական կրթությունը:

17-19-րդ դարերում սկզբնավորվել են հերոսական երգերը, խմբերգերը, քայլերգերը և այլն: Ձևավորվել է սիմֆոնիզմը:

Դասական նկարագիր է ձեռք բերել սիմֆոնիկ նվագախումբը:

Հայաստանում երաժշտությունը սկզբնավորվել է մ. թ. ա. 20-18-րդ դարերում, իսկ երաժշտական բանահյուսության ձևերի մասին տեղեկություններ կան մ. թ. ա. 14-րդ դարի խեթական սեպագրերում:

Գեղջկական երաժշտական բանահյուսությունն ընդգրկում է երգի բազմաթիվ տարատեսակներ, առանձնացնում են պանդուխտի երգերը, անտունիները, հայրենները: Պրոֆեսիոնալ երգեցիկ արվեստի ձևավորումը սերտորեն կապված է հոգևոր երաժշտության ժանրերին: Վաղ միջնադարից տարածվել են շարականները, սաղմոսները, 10-րդ դարից՝ գանձեր, հոգևոր և շխարհիկ տարրերը: 7-14-րդ դարերում մեղեդիները գրառվել են խազերով: 1813-1815 թվականներին Համաբարձում Լիոմնջյանը ստեղծել է հայկական նոր ձայնագրություններ: 17-րդ դարից զարգացել է աշուղական արվեստը, իսկ գործիքայինը՝ առավելապես 19-րդ դարում: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին հայ կոմպզիտորների երկերով նշանավորվել է ազգային կոմպոզիտորական դպրոցի ծնունդը: Ազգային կոմպոզիտորական դպրոցի առաջընթացի նպաստել են նաև սփյուռքահայ կոմպոզիտորները:

Զարգացման որոշակի աստիճանի է հասել նաև ջազային ու էստրադային երաժշտությունը:

Հայկական երաժշտագիտական ուսումնասիրություններ են արել շատ հայ երաժշտագետներ:

Հայերի երաժշտական արվեստի մասին ավելի բազմազան և մարնամասն տեղեկությունները վերաբերում են այն պատմական ժամանակաշրջանին, երբ Հայաստանը հանդես է գալիս որպես կազմակերպված և ուժեղ պետություն հատկապես Արտաշեսյանների թագավորության օրոք:

3.2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿ

Գրականությունը արվեստի հիմնական տեսակներից մեկն է: Այն ծագել է գրի, այբուբենի առաջացումից հետո:

Առաջին նշանավոր երկերը բանահյուսական ստեղծագործությունների գրառումներն են կամ մշակումները: Արվեստի այս տեսակը իրականության ճանաչման, արտացոլման ձևերից է, որ իրականացվում է գեղարվեստական պատկերավոր եղանակով: Լինում են արձակ և չափածո: Սկսած հնագույն ժամանակներից՝ գրականությունը ունի 3 մեծ բաժին՝ էպիկական, քնարական, դրամատիկական:

Ազնվական դասակարգի լեզուն գրաբարն էր, մի ճոխ, կանոնավոր, զարգացած և ամենանուրբ արտահայտություններին ընդունակ գրական լեզուն, որ ամբողջ քաղաքակրթական զարգացման ամենաբարձր նշանը կարող էր համարվել: Պատմական վաղ շրջաններից մեզ հասած գրական ժառանգության ու հատկապես բանաստեղծությունների բարձր գեղարվեստական ոճը, գրական լեզու՝ գրաբարը վկայում են, որ մեր հին գուսանները (նաև վիպասանները) եղել են ուսյալ արվեստագետներ: Մինչև հայկական գրերի գյուտը վիպասաների արվեստն հայ ժողովրդի պատմական ճակատագրի բանավոր տարեգրությունն է: Վիպասաններից է, որ հայ պատմիչներն ու տարեգիրները երկրի և ժողովրդի պատմական անցյալի մասին արժեքավոր տեղեկություններ են քաղել:

Հայ երաժշտական ողջ պատմության ընթացքում նշանակալից ու անքակտելի են նրա կապերը պոեզիայի հետ:

Հայտնի է, որ ժողովրդական պոետիկ ստեղծագործության հիմնական տեսակները պարտադիր կերպով հանդես էին գալիս, որպես խոսքի ու երաժշտության սինթեզ: Դրանք բոլորն էլ կամ երգվում էին բառի բուն իմաստով, այսինքն՝ հանդիսանում էին երգային արվեստի այս կամ այն տարատեսակը, կամ արտասանվում էին ծոր տալով որպես ռեչիտատիվ: Այդ սինթետիկ ստեղծագործությունների մեծ մասին երաժշտությունը մեզ չի հասել, առանձին պահպանված խազային գրառումներն էլ դեռևս չեն վերծանվել: Գրականության ժամանակակից պատմության մեջ արվեստի այս ձևերը ընդունված է ուսումնասիրել լոկ որպես գրական տեքստեր՝ անտեսելով նրանց երաժշտական կողմը: Սակայն պատմականորեն ճիշտ է դրանք սինթետիկ արվեսի նմուշներ համարելը:

4.ԱՐՎԵՍԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստներն ամեն վայրկյան վեր են ածվում մեկը մյուսին: Արվեստներից մեկն իր շարունակությունն ու ավարտն է գտնում մեկ այլ արվեստում:

Երաժշտությունն ու գրականությունը ունեն մի շարք ընդհանրություններ: Երկուսն էլ կարող են արտահայտվել մարդու ձայնի միջոցով, ընդհանուր են նաև ռիթմն ու հնչերանգը: Միմյանց լրացնելով, արտահայտում են բազմապիսի զգացմունքներ, մտքեր ու գաղափարներ, նկարագրում են մարդկային փոխհարաբերություններն ու բնության երևույթները: Երաժշտության ու գրականության միասնությունից են ծնվել երգը, ռոմանսը, կանտատը, օպերան և այլն:

4.1. ԵՐԳ

Երգը երաժշտական փոքրածավալ ստեղծագործություն է, երաժշտության ժանր:

Երգը երաժշտության ամենտարածված ձևն է , որը մադուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում: Երգեր լսում ենք ամնուր, երգի մեջ միավորված են երաժշտությունն ու բանաստեղծական խոսքը: Երգին բնորոշ են ցայտուն մեղեդայնությունը, արտահայտչամիջոցների պարզությունը, կառուցվածքային հստակությունը (մեծ մասամբ տուն՝ կրկներգով կամ առանց կրկներգի, կրկնակ տողերով):

Երգերը լինում են ժողովրդական, պրոֆեսիոնալ (կոմպոզիտորների ստեղծած), որոնք տարաբնույթ են՝ օրորոցային, կենցաղային, աշխատանքային, քնարական, ծոներագային, հայրենասիրական և այլն: Երգերը կատարվում են միայնակ կամ խմբով, նվագակցությամբ և առանց նվագակցության: Երգերն լինում են ձայնային կամ վոկալ, նաև գրված նվագարանների համար:

Երգի հիասքանչ նմուշներ են նաև հայկական միջնադարյան շարականներն ու տաղերը: Տարբերվում են հոգևոր և աշխարհիկ տաղեր: Հոգևոր տաղերը, ի տարբերություն շարականների, կրոնական երգեր չեն, արարողության մեջ ներառվում են նշանավոր տոներին հանդիսավարություն հաղորդելու նպատակով: Տաղերի որպես երաժշտական ժանրի, բուռն զարգացումն սկսվել է 10 –րդ դարից՝ Գր. Նարեկացու ժամանակշրջանից, թերևս նրա շնորհիվ:

Հետագայում տաղի ժանրը հարստացել է նաև աշխարհիկ բնույթի նշանավոր ստեղծագործություններով:

Աշուղական երգը նույնպես արվեստի ճյուղ է: Հայկական տաղաչափության հնագույն ձևերից է «Հայրենը», որ «Հայերեն» բառի սղված մի ձևն է:«Հայրեն - հայերեն», իսկ գավառաբարբառներում՝ «հերեն» կամ «հարեն» նշանակում է երգ: Աշուղական երգարվեստը, որի ծագումը կապվումէ 17-18 –րդ դարերի հետ, դառնալով գուսանական արվեստի ժառանգորդը, ձեռք բերեց իր ուրույն դիմագիծը, մշակեց երաժշտական և տաղաչափական արվեստի իր սեփական կանոնները: Ընդունված ավանդույթ էր աշուղական մրցույթներին մասնակցությունը, որոնց ընթացքում երգով պատասխանելով մրցակցի առաջադրած հարցին՝ աշուղը ցուցաբերում էր ստեղծագործական վարպետություն, , հանպատրաստից հորինելու շնորհք: Աշուղ բառը արաբերեն է (ըստ ինձ հայերեն՝ ղուշ ա. ձախից աջը, ընթերցված աջից ձախ: Աղավնի):

Աշուղը սիրո երգիչ է: Նա գովերգում է նաև հայրենիքը, բնությունը, մարդկային բնավորության լավագույն դրսևորումները, պախարակում է չարը, անարժանը, խրատում, մտորում կյանքի մասին:Սերը աշուղի մի թևն է, խրատն ու քարոզը՝ մյուսը: Բաժանվում են 2 խմբի՝ գյուղական, քաղաքային:

Աշուղների արվեստում մեծ տեղ գրավող բարոյախոսական թեմաներով երգերում է բացահայտվում հեղինակի իմաստնության աստիճանը, դիտելու և ընդհանրացնելու կարողությունը: Աշուղները բացի արվեստից տիրապետում էին նաև արհեստի: 18 –րդ դարի գրականության և արվեստի խոշորագույն դեմքը Սայաթ - Նովան էր: Ստեղծագործության մեջ ներառելով աշուղական արվեստին բնորոշ թեմատիկ, ժանրային, տաղաչափական, ոճական հատկանիշները, դրանք բացհայտելով անզուգական ավարտությամբ և ամողջականությամբ՝ նա իր արվեստը հասցրեց դասական մակարդակի, գեղարվեստական բարձրագույն ընդհանրացման:

4.2.ՌՈՄԱՆՍ

Ռոմանսը երգ է, որտեղ ավելի խորն են արտահայտվում մարդկային հոգեվիճակը, զգացմունքներն ու հույզերը: Ռոմանսը պարտադիր ունենում է նվագակցություն: Այն ծագել է 18-րդ դարում Իսպանիայում և այդպես է կոչվել, որովհետև երգվել է իսպաներեն, այսինքն ռոմաններեն, այլ ոչ թե լատիներեն, որով երգվում են հոգևոր երգերը: Հայկական ռոմանսի հիմնադիրը Ռոմանոս Մելիքյանն է: Նա նպաստեց Հայաստանում նոր երաժշական մշակույթի ստեղծմանը, երաժշտական-լուսավորչական գործի կազմակերպմանը: Այդ իմաստով արգասաբեր էին նրա ջանքերը Երևանում երաժշտական ստուդիայի (1921), ապա կոնսերվատորիայի (1923) հիմնադրման, ինքնագործ երգչախմբերի ստեղծման ու ղեկավարման ուղղությամբ: Ռ. Մելիքյանի ռոմնասի լավագույն նմուշներից է «Վարդը» երգ-ռոմանսը գրված պարզ քառյակային ձևով, դյուրահաղորդ, մեծ շնչի գեղեցիկ մեղեդիով: (Խոսք՝ Գյոթեյի թարգմ.՝ Թումանյանի, երաժշտությունը Ռ. Մելիրքյանի) «Վարդը» ստեղծագործությունը ոճական առումով քաղաքային քնարական երգ է, որում հյուսվել են ազգային գեղջուկ ու աշուղական երգերի և եվրոպական դասական երաժշտության բնորոշ տարրեր:

Ռոմանսները լինում են երգչային և նվագարանային: Կոմպոզիտորները ռոմանսներ են գրել նաև առանձին նվագարանների կամ նվագախմբերի համար: Չնայած հնչում են առանց խոսքի, այնուամենայնիվ, բնույթով երգային են և կոչվում են ռոմանսներ:

4.3.ԿԱՆՏԱՏ

Կանտատ իտալերեն բառ է նշանակում է, երգիչ: Կանտատի երաժշտությունը նույնպես գրվում է գրական տեքստի վրա: Այն բազմամաս խմբերգային ստեղծագործություն է:

Հայրենիքի թեման առանցքային ուշադրության և նշանակության կիզակետում էր: Ազգային ձևը Ալ. Հարությունյանի համար բովանդակության իմաստավորումն է, մասնակիի ու ընդհանուրի ամբողջությամբ: Իր գործերով արվեստագետը գովերգեց Հայրենիքը, նրա անցյալն ու ներկան, բնությունն ու մարդկանց: Հայրենասիրությունը առաջին հերթին կենսահաստատություն է: «Հայրնեիք» կանտատում հայրենիքը, աշխատանքը, մայրական սերը գովերգող, ազգային արվեստի ավանդույթները զարգացնող ստեղծագործությունը ճանաչվեց որպես խոշոր հաղթանակ, արժանացավ առաջին կարգի Պետական մրցանակի:

4.4.ՕՊԵՐԱ

Օպերան երաժշտական մշակույթի ամենաբարդ ու կարևոր ժանրերից է, քանի որ օպերայում միատեղվում են արվեստի գրեթե բոլոր ձևերը՝ երաժշտություն, պարարվեստ, գրականություն, թատրոն, կերպարվեստ, բեմական զգեստի արվեստ, լուսավորման արվեստ և այլն, որոնց ներդաշնակ միասնությամբ, բեմական խաչի ու գործողության միջոցով բացահայտվում է երաժշտաթատերական ստեղծագործության բովանդակությունը: Յուրաքանչյուր ազգ ստեղծում է իր ազգային օպերան, որ կպատմի իր անցյալի ու ներկայի, իր կյանքի, բնավորության ու սովորույթների մասին, մեծամասամբ՝ իր իսկ ազգային գրականության սյուժեներով: Հայկական առաջին օպերայի հեղինակը դարձավ Տիգրան Չուխաճյանը, որն ապրեց և գործեց Կոստանդնուպոլսում և բեմադրեց իր օպերաները: Ամենամեծ պատմական նշանակություն ունեցավ նրա «Արշակ II» օպերան (1868), որը սկիզբ դարձավ պատմահայրենասիրական ժանրի զարգացման ուղին: «Արշակ II» օպերայի սյուժեն 4-րդ դարում Հայաստանում կատարված պատմական դեպքերն էին: Արևելյան Հայաստանում ստեղծված առաջին օպերան Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան է: Հիմքում Անուշի և Սարոյի դժբախտ սիրո պատմությունն է: Այն քնարական-կենցաղային օպերա է, որտեղ կոմպոզիտորը գովերգում է հավատարիմ գեղեցիկ սերը, բողոքի ձայն բարձրացնում մարդու ազատությունը կաշկանդող, քարացած օրենքների դեմ:

Դասի պլան V դասարան

Դաս 11 -Դասի թեման «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի ամփոփում:

Դասի նպատակը՝ Ամփոփել թեման հարցաշարերի, խաղերի, երաժշտական ժամանցների միջոցով, արժևորել երաժշտության և գրականության փոխկապվածության,փոխներգործության շնորհիվ ստեղծված արժեքները,ունենալ սեփական կարծիք, ստեղծել թեմատիկ երաժշտական խաղեր:

Ուսուցանող. Կատարել երաժշտության, գրականության, փոխկապվածության, փոխներգործության վերլուծություն,կատարելագործել յուրաքանչյուր արվեստի արտահայտչական միջոցները զգալու կարողություն:

Զարգացնող Կազմակերպել երաժշտական խաղեր, վիկտորինաներ, ժամանցներ՝ խթանելով աշակերտների երաժշտական իմացությունների համարձակ դրսևորման կարողության զարգացումը:

Դաստիարակող Նպաստել սովորողների պատկերային մտածողության զարգացմանը, կապ ստեղծելով արվեստների և կյանքի միջև, որը իրականության արտացոլումը դարձ- նում է ավելի պատկերավոր և զգայական:

Մեթոդական հնարքներ....Հարց ու պատասխան, գծանկարներ, վենի դիագրամ, մտքի քարտեզագրում, զննական, տեսալսողական դիդակտիկ նյութեր:

Միջառարկայական կապ երաժշտություն, գրականություն, կերպարվեստ,թատրոն: -

Դասի ընթացքը Խթանում Ամփոփել «Երաժշտությունը և գրականությունը» թեման հարցաշարերի, երաժշտական ժամանց- ների,խաղերի միջոցով և ստեղծել հետա- քրքրքիր ու բովանդակ դաս: Իմաստի ընկալում

Նյութի բացատրում Գրատախտակին գրել վ,ր,տ,ա,ս,ե տառերը:Աշակերտները փորձում են վերականգնել երաժշտական արտահայտությամբ բառը:Վերականգնելով արվեստ բառը ներկայացնում են բառի ու իմաստի նշանակությունը:Այնուհետև բացում են սեղանին դրված քարտերը, գտնում արվեստի տեսակները և փակցնում արվեստ բառի շուրջ:Նույն կերպ գտնում և փակցնում են արտահայտչամիջոցները համապատասխանաբար: Ներկայացնում են երաժշտության և գրականության ընդհանրությունները,գծապատկերում են երաժշտության ու գրականության միասնությունից ծնված արվեստի տեսակները:Ներկայացնում են տեսակները: Այս բոլորը ներկայացնում են հարցաթերթիկների միջոցով, որը պատահականության

սկզբունքով ընտրում են աշակերտները և ըստ թվային հերթականությամբ բացատրում են հարցերի պատասխանները: Կատարում են թեմատիկ երգերը,վերլուծում են,զգալով կյանքի արտացոլանքը արվեստում:

Երգեցողություն Կոմիտաս «Կաքավիկ», Հ.Թումանյան «Ա՛խ,ի՛նչ լավ են», Սայաթ - Նովա «Քամանչա»,Ռ.Մելիքյան«Վարդը», Տ.Չուխաջյան «Ազատություն», Ա.Տիգրանյան «Ամպի տակից»

Երաժշտական խաղեր. 1. Ցուցադրվում է էկրանին Ա.Տիգրանյանի «Անուշ», Տ.Չուխաջյանի «Արշակ ||», Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերաներից հատվածներ առանց նշելու: Աշակերտները կռահում են օպերաները, ներկայացնում լիբրետոն և կոմպոզիտորին: 2.«Սիմֆոնիկ նվագարաններ».աշակերտները լսում են նվագարանի աուդիո ձայնը, ցուցադրում համապատասխան նկարը, որը նախապես դրված է աշխատանքային սեղանին և նշում նվագարանի անունը և տեսակը: 3.«Ազգային նվագարաններ».մնջախաղով կամ նմանակումով ներկայացնում է ազգային նվագարանը ըստ նկարի, որը միայն ներկայացնողն է տեսնում, իսկ մնացած աշակերտները կռահելով տեսակավորում են նվագարանը և շարու- նակում խաղը:

Կշռադատում Դասը ավարտվում է առաջարկությամբ. ստեղծագործել հայրենի բնության գեղեցկությանը նվիրված գովերգող քառատող: Ստեղծել երաժշտական ժամանց, թեմատիկ խաղեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական կրթությամբ հայը պետք է ազգային խորքային ուսումնասիրությունը ուղղորդի դեպի սեփական արժեքները: Պատմական աշխարհագրական տարածքների կորուստը անդրադառնում է նաև մշակութային սահմանների վրա: Հայերենի սահմանը նախ և առաջ դա իմացությունն է ու պահպանությունը և այն ճիշտ փոխանցելու տրամաբանությունը: Նման տարածքային կորուստները, (որը նյութն է ազգայինի ստեղծման) թուլացնում են պաշարների տեղանքային յուրօրինակ հատկությունը: Հարկ եմ համարում նշել, որ դասագրքերում ավելանան ժողովրդական երգերի բարբառային օրինակները՝ պատմական մեկնությամբ, առանց գրականի փոխարինելու, որը պատնեշում է տարածաշրջանի հնչերանգային ընկալումը: Կարևոր անհրաժեշտություն է հայկական խազերի իմացությունը՝ ճանաչելու և վերծանելու այն ստեղծագործությունները, որն մինչ այժմ դեռ պահպանված է խազագրությամբ: Կարևոր եմ համարում ազգային նվագարանների հայկական ծագման պատմությունը ներկայացվի դասագրքերում, ինչպես նաև ընդգրկվեն նոր տեսակները իրենց պատմությամբ: Երաժշտատեսական գիտելիքները շատ կարևոր են երաժշտության ընկալման արարման համար: Շաբաթական մեկ ժամը քիչ արդյունավետ է այն իրականացնելու համար: Հարկ է ավելացնել շաբաթական ժամերի քանակը: Երաժշտության դասի ծրագրային նյութը պետք է համահունչ լինի միջառարկայական թեմաների հետ, որպեսզի օրվա վերջում աշակերտը ձեռք բերի տվյալ գիտելիքի ընդհանուր արդյունավետ իմացություն, այլ ոչ թե առարկայական ծանրաբեռնված ինֆորմացիոն ու չմտապահվող դասերից ունենա գիտելիքի պատկերացումների մասին սթրես ու խորշի սովորելուց: Բարոյական գիտելիքները ձեռք բերելու գիտությամբ զորանալու, կամքը դեպի բարին ուղղելու միջոցով կպաշտպանենք մեր մշակութային սահմանները: Քանզի մշակույթը ազգի արժեհամակարգն է, ուղված ազգի վերարտադրմանը: Ուրեմն շարունակենք ձևավորել ստեղծագործելու ունակությամբ ազգային մշակույթի հոգեկրթությունը:

Հայը հավերժ է իր արարումով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռ. Եսայան, Ժ. Զուրաբյան -Երաժշտության աշխարհում, Երևան 2005թ.:
2. Մարգարիտ Հարությունյան,Աննա Բարսամյան -Հայ երաժշտության պատմություն, Երևան 1996թ.:
3. Յու. Վ. Յուզբաշյան, Ա. Ա. Փահլևանյան- Երաժշտություն 5, 2015թ.:
4. Ալեքսանդր Շահվերդյան- Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան 1959թ.:
5. Արամ Քոչարյան Հայ գուսանական երգեր, Երևան 1976թ.:
6. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա- Դպրոցական մեծ հանրագիտարան գիրք 2-րդ, հատոր 1, Երևան 2009թ.: